ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» հունիսի** 2015թ. N-- Ա

## ՈՐՈՇՈՒՄ

## ԹԱԴԵՎՈՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Տալ համաձայնություն պատմաաշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Թադևոս Հակոբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Աբովյան փողոց հ.39 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԹԱԴԵՎՈՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմաաշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Թադևոս Հակոբյանը ծնվել է 1917թ. հունիսի 15-ին Կապանի շրջանի Լեռնաձոր գյուղում:

Ավարտել է գյուղի 7-ամյա դպրոցը, այնուհետև՝ Կապանի հանքերում աշխատել որպես փականագործ: Աշխատանքին զուգընթաց սովորել ու ավարտել է բանվոր երիտասարդության երեկոյան միջնակարգ դպրոցը:

1935թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմաաշխարհագրական ֆակուլտետը: 1940թ. համալսարանն ավարտելուց հետո վերադարձել է գյուղ և Ողջիի միջնակարգ դպրոցում աշխատել ուսուցիչ:

1941թ. հունիսի 22-ին Թադևոս Հակոբյանը զորակոչվում է բանակ, մասնակցում Մոսկվայի պաշտպանությանը, այնուհետև՝ Նովորոսիյսկի ուղղությամբ մղվող մարտերին, որտեղ ծանր վիրավորվում է և զորացրվում, վերադառնում հայրենի գյուղ: Շարունակում է մանկավարժական աշխատանքը Ողջիի, Քաջարանի, Կապանի միջնակարգ դպրոցներում:

1945թ. ընդունվում է պետական համալսարանի ասպիրանտուրան, 1949թ. ավարտում և պաշտպանում թեկնածուական թեզ:

1962թ. պատմաաշխարհագրական գիտությունների դոկտոր էր, 1963թ. նրան շնորհվել է պրոֆեսորի, 1968թ.՝ գիտության վաստակավոր գործչի կոչում: Եղել է պետական համալսարանի աշխարհագրական ֆակուլտետի դեկան, ղեկավարել է տնտեսական աշխարհագրության ամբիոնը:

Դոկտոր, պրոֆեսոր Թադևոս Հակոբյանը մինչև իր կյանքի վերջը դասախոսություններ է կարդացել համալսարանում, կազմել է մի շարք դասագրքեր ու ձեռնարկներ, քարտեզներ, ուսումնական ծրագրեր: Հեղինակ է 25-ից ավելի գիտապատմական մեծարժեք աշխատությունների. Հայաստանի պատմական աշխարհագրությանը վերաբերող գիտական ուսումնասիրություններ, «Երևանի պատմություն» քառահատոր աշխատությունը, Սյունիքի պատմաաշխարհագրության հատուկ գիտական ուսումնասիրությունը, հայ ժողովրդի պատմության դասագրքեր և այլն:

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների» քառահատոր հանրագիտական բառարանն անգնահատելի նշանակություն ունեցող աշխատություն է, որը սկզբնաղբյուր է հանդիսանում գիտնականների և ուսումնասիրողների համար: Մեծ գիտնականն ակտիվ կերպով մասնակցում էր հասարակական-քաղաքական կյանքին, գիտամանկավարժական և գիտական գործունեության համար արժանացել է կառավարական բազմաթիվ պարգևների:

Ականավոր գիտնական Թադևոս Հակոբյանը մահացել է 1989թ. հոկտեմբերի 14-ին:

Թադևոս Հակոբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Աբովյան փողոց հ.39 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Սիմոնյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԹԱԴԵՎՈՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Թադևոս Հակոբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԹԱԴԵՎՈՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Թադևոս Հակոբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ